ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունվարի 2025 թվականի N 17 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 1122-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1122-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածի ցանկը 45-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 46-51-րդ կետերով.

«

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 46. | 1516209608 | Արմավի յուղի զտամաս | Արմավի յուղի զտամաս՝ հրուշակեղենի բուսական ճարպ, հիդրոգենացված, ռաֆինացված, ոչ լաուրինացված տեսակի | կգ | 2 500 000 | Մալայզիա, Ինդոնեզիա, Սինգապուր, անհայտ | Մալայզիա, Ինդոնեզիա, Սինգապուր | 2 825 000 000 | |
| 47. | 3824995500 | Կայունացուցիչ/ էմուլգատոր | Բարդ ճարպաթթուների մոնո-, դի- և տրի- եթերների ու գլիցերինի խառնուրդներից էմուլգատոր և կայունացուցիչ պաղպաղակի արտադրության համար | կգ | 150 000 | Դանիա, ԵՄ, Վրաստան, անհայտ | Դանիա, ԵՄ, Վրաստան | 525 000 000 | |
| 48. | 1515908900 | Կակաոյի յուղի բարելավիչ | Բուսական ծագման՝ շիի յուղի զտամաս, ռաֆինացված, առանց քիմիական կազմի փոփոխման, կակաոյի յուղի բարելավիչ: | կգ | 1 180 000 | Շվեդիա, Մոլդովա, Ինդոնեզիա, Մալայզիա, անհայտ | Շվեդիա, Մոլդովա, Ինդոնեզիա, Մալայզիա | 3 304 000 000 | |
| 49. | 0802991000 | Պեկան | Պեկան կճեպից մաքրած | կգ | 75 000 | ԱՄՆ, Մեքսիկա, Չիլի, ԵՄ, Կանադա, Արգենտինա | ԱՄՆ, Մեքսիկա, Չիլի, ԵՄ, Կանադա, Արգենտինա | 406 500 000 | |
| 50. | 2905449100 | Սորբիտ | Սննդային հավելում՝ d-գլյուցիտ (սորբիտ) f2100004, 2 զանգվ. % կամ պակաս d-մաննիտ պարունակող փոշու տեսքով | կգ | 150 000 | Չինաստան, Ինդոնեզիա | Չինաստան, Ինդոնեզիա | 118 500 000 | |
| 51. | 3919108000 | Բիակսիալ ուղղվածության պոլիպրոպիլե- | Բիակսիալ ուղղվածության պոլիպրոպիլենային (bopp) ինքնակպչուն ժապավեն՝ 20 | կգ | 250 000 | Չինաստան, ԵՄ, ԱՄէ | Չինաստան, ԵՄ, ԱՄէ | 268 750 000 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | նային ինքնակպչուն ժապավեն | սմ-ից ոչ ավելի լայնությամբ գլանափաթեթներով, ակրիլային պատվածքով, տպագրված կամ չտպագրված, թափանցիկ կամ սպիտակ | | | | | | |

».

2) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «83 228 250 000» թիվը փոխարինել «90 676 000 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ